Քանի մը դիտողություններ Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» Բ հատորի, Ա մասի առթիվ

Բազմավաստակ Հ. Մանանդյանի վերջին հրատարակված գործը, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր Բ, մասն Ա (Երևան, 1957), կրնանք Հայաստանի Արշակունիներու շրջանը։

Գիրքը կկրե դրոշմը հեղինակի բարեխիղճ և մանրակրկիտ քննության, որ իր բոլոր դրությանց հատկանիշը եղած էր անցյալի մեջ։ Ի մասնավորի օտարազգի աղբյուրներու հակիրճ, երբեմն հատ ու կտոր ցուցմունքներեն Ա, Բ և Գ դարերու Արշակունի թագավորներու հաջորդականությունը ճշտորոշելու ճիգը արժանի է ամեն գնահատանքի։ Մանավանդ որ այն շրջանի համար հայ աղբյուր գրեթե գոյություն չունի։

Չորրորդ դարու պարագային, ուր առավելապես Փավստոս և Խորենացի հմուտ ակադեմիկոսի առաջնորդներն են, կդժվարանանք հետևելու իր կարգ մը եզրակացություններուն, թե ժամանակագրական և թե պատմական անցքերու ստուգման տեսակետեն։

Չորրորդ դարը հայոց պատմության ամենեն հետաքրքրական մի դարն է։ Նախարարի և թագավորի պայքարը։ Նախարարական երկու գլխավոր խմբավորումներու մոլեգին կռիվներ, մին պարսկական, մյուսը բյուզանդական քաղաքականության ջատագով։ Արշակունի թագավորներու մղձավանջային հոգը իրենց քայքայվող հեղինակությունը փրկելու՝ մեկ կողմն կենտրոնախույս մեծ իշխաններու համառ սադրանքներեն, մյուս կողմե Սասանյան արքաներու և բյուզանդական կայսրերու արյունալի մրցակցություններեն։ Հայ եկեղեցվո ձեռք բերած հրկայական հեղինակությունը, որ կաթողիկոսը պետական աչքի ընկնող գործիչ մը կդարձնե։ Այս ամենը կստիպեն հայ պատմության ուսանողը ըստ կարելույն ճշտելու դեպքերի բնույթը, անոնց ժամանակը, դերակատարներու նկարագիրը և անոնց գործունեության տոն տվող դրդապատճառները։

Մանանդյանի գրքի ավելի քան 100 էջերը կվերաբերեն չորրորդ դարու անցքերուն։ Հեղինակի գլխավոր աղբյուրը, հասկանալիորեն, Փավստոսն է, ապա Խորենացին։ Իսկ օտարազգիներեն՝ Ամմիանոս Մարկելինոս։

Բարձր գնահատելով բազմավաստակ դիտնականին աշխատությունը սակայն մեկե ավելի պարագաներուն չեմ կրնար համաձայնիլ իր տեսակետներուն և ցուցմունքներուն, ի մասնավորի ժամանակագրական.

Խորենացին հինգերորդ դարու մատենագիր չհամարելու իր մտասևեռումը՝ պատմահոր արժեքը նսեմացուցած է իր աչքին որպես աղբյուր չորրորդ դարու դեպքերուն։ Իսկ Փավստոսի գրքեր գործածելու իր եղանակը մեզի կամայական կթվի։ Թերևս ատոր գրաբարը՝ ըստ կամս, ավելի մեղմ հնչե։

Մանանդյան, ըստ կամս, Փավստոսի հիշատակած դեպքերեն ոմանք կընդունի, ոմանք կմերժե։ Սակայն մեղի կզլանա բացատրել, թե ինչու մեկը կընդունի, իսկ մյուսը կմերժե։ Ավելորդ է խոսել Փավստոսի պատմած հրաշքներու և չափազանցություններու մասին, որոնք մերժելի են առանց այլևայլի։ Բայց պատմական դեպքեր և թվական երբ կընդունիս կամ կմերժես, բացատրություն կպարտիս ընթերցողիդ։

Օրինակներ տանք։ Մանանդյան կմերժե ներսես կաթողիկոսի թունավորումը Պապ թագավորեն, կընդունի Օլիմպիայի թունավորումը Փառանձեմեն։ Կմերժե Տրդատի սպանությունը, որ Խորենացին կհիշե, կընդունի Հուսիկի բրածեծ ըլլալը։ Կմերժե Տիրանի գերեվարությունը ու կուրացումը իր հաճախ գործածած բառերով, «վիպական-ստեղծական» է կրսե, կընդունի Արծրունի և Ռշտունի տոհմերու բնաջնջումը։ Կմերժե Արշակի անձնասպանությունը, կընդունի Գնել իշխանի սպանությունը։ Կմերժե Փառանձեմի սպանությունը, կընդունի Մուշեղի հունական կողմնակցությունը և անոր սպանությունը Վարազդատեն։ Կմերժե Մանվելի պարսից դեմ կռիվները, կընդունի Խորենացիի կողմե Վարազդատին տրված 4 տարի թագավորությունը, Պապի տված 7 տարին, Տիրանի տված 11 տարին, Խոսրովին տված 9 տարին։ Բայց կմերժե Խորենացիի Տրդատին տված 56 տարին, և Արշակ Բ-ին տված 30 տարին։ Առհասարակ յուր կմնա կաթողիկոսներու յուրաքանչյուրի տարեթվի մասին։ Կարծես ըսել կուզե, «ոչ կրմերժեմ, ոչ կընդունեմ Խորենացիի հիշած տարեթվերը, քանզի այդ ալ ավելի կկնճռոտե հարցերը»։

Կխորհինք թե հավանաբար մերժեր ընդունել Օլիմպիայի Արշակին հետ ամուսնանալը, եթե Ամմիանոսը հիշված չըլլար։ Մինթ «վիպական-ստեղծական» չէ հռոմեական կայսեր նշանածի մը գալ, իր աչքին «բարբարոս» երկիր մը և անոր «բարբարոս» թագավորին ամուսնանալ։

Կամ մերժեր Պապի սպանության մանրամասնությունը, ինչպես Խորենացին մերժած էր — որպես «վիպական-ստեղծական», եթե Ամմիանոսե հիշված չըլլար գրեթե միևնույն մանրամասնությամբ, ինչ որ Փավստոսը կուտա։

Մեր գլխավոր գիտողությունը ժամանակագրական է։

Փավստոս, ինչպես ամենուն ծանոթ է, ժամանակագրություն ինչ է չգիտեր։ Մինչ Խորենացին, ընդհակառակը, առանց ժամանակագրության գրել կարելի չէ կըսե։

Յուրաքանչյուր թագավորի և կաթողիկոսի տարեթիվը կուտա Խորենացին։ Այսպես, թագավորներ — Տրդատ՝ 56, Խոսրով Կոդակ՝ 9, Տիրան՝ 11, Արշակ Բ՝ 30, Վարազդատ՝ 4, Կաթողիկոսներ—Գրիգոր՝ 30, Արիստակես՝ 7, Վրթանես՝ 15, Հուսիկ՝ 6, Փառներսեհ՝ 4, Ներսես՝ 34, Շահակ՝ 4, Զավեն՝ 4, Ասպրակես՝ 5, Սահակ՝ 51։

Թագավորի մը կամ կաթողիկոսի պաշտոնավարելու սկսած թվականը կրնա սխալ տված ըլլալ Խորենացին և տված է մեկեն ավելի անգամներ։ Սակայն յուրաքանչյուրի պաշտոնավարության Խորենացիին տված ամբողջական տարեթիվը չենք կրնար փոխել կամ մեկդի նետել առանց մանրազնին քննության և փաստերու։ Որովհետև այս մեկ պարագային Խորենացիեն ուրիշ աղբյուր չունինք։ Եվ, ըստ կամս, ինչպես ըրած են կարգ մը պատմարաններ, սույն տարեթիվը չենք կրնար փոխել կամ մեկդի նետել առանց մանրազնին քննության և փաստերու։ Որովհետև այս մեկ պարագային Խորենացիեն ուրիշ աղբյուր չունինք։ Եվ, ըստ կամս, ինչպես ըրած են կարգ մը պատմարաններ, սույն տարեթիվը կրճատել, որպեսզի քանի մը ճշտորոշված թվականներ անխախտ մնան, լարիրինթոս կառաջնորդեն մեզ։

Խորենացին որպես Ե դարու մատենագիր, գոնե Դ դարու թագավորներու և կաթողիկոսներու մասին կրնար հավաստի տեղեկություններ գտնել թե կաթողիկոսական և թե արքայական դիվաններու մեջ։ Օրինակ, երբ Խորենացին կըսե թե Ներսես հայրապետական աթոռը դրավեց 34 տարի, իր այս հավաստումին աղբյուր ծառայած է նույնինքն Խորենացիի ուսուցիչ ս. Ներսեսի զավակ Սահակ կաթողիկոս։ Արդյոք Սահակ քանի՞-քանի անգամներ իր աշակերտներուն — որոնց կարգին Խորենացին — պատմած էր իր նշանավոր հոր մասին։ Բայց եթե Խորենացին Ե դարու մատենագիր համարենք կրնաս կասկածի ենթարկել իր թվերը։

Երբ Խոսրովի, Տիրանի, Պապի և Վարազդատի մասին Խորենացիի տված տարեթվերը կընդունիս, ինչպես ըրած են Մանանդյան և ուրիշներ, պատճառաբանյալ և համոզիչ փաստ պետք է ցույց տաս, թե ինչու Արշակ Բ-ի 30 տարին 15-ի կիջեցնես, կամ Տրդատի 56 տարին՝ 32-ի։

Խորենացին բյուզանդական կայսրերու և Սասանյան արքաներու համար իր ձեռքը ունեցած է ժամանակագրական ցանկ մը յուրաքանչյուրին համար։ Եվ այդ ցանկերը մեր ունեցածեն բոլորովին տարբեր են։ Կարկառուն օրինակ մը կգտնենք մեր այս ըսածին Վարազդատ թագավորի գահակալության տարիի մասին Խորենացիի գրածը։ Ան կըսե թե Թեոդոս իր թագավորության 20-րդ տարին Վարազդատը թագավոր կարդեց։ Քանի մը տող անդին կգրե. երբ Վարազդատ Շապուհի 55-րդ տարին Հայաստան եկավ իբր թագավոր (Խոր. Գ. 40)։ Ուրեմն, ըստ Խորենացիի, Վարազդատի գահակալության տարին կզուգադիպի Թեոդոսի 20-րդ և Շապուհի 55-րդ տարիին։ Խորենացին իր երկու ցանկեն այս մեկ տարեթիվը հանած է։ Մինչդեռ մեր գիտցած ժամանակագրական հավաստի ցանկի վերածելով Խորենացիի ըսածը պիտի ունենանք հետևյալը. Թեոդոսի 20-րդ տարին՝ 398 թվականը։ Շապուհի 55-րդ տարին՝ 365 թիվը։ Կշվարիս կմնաս թե Վարազդատ 398-ին եթե ոչ 365-ին դահ ելավ։ Բայց կարևորն այն է, որ Խորենացին կըսե, թե Վարազդատ չորս տարի թագավորեց։ Քեզի կմընա ճշտել դահակալության տարին, եթե կրնաս։

Կամ ուրիշ օրինակ մը Խորենացիեն. «Պարսից Որմիզդ թագավորի երկրորդ և Կոստանդի ինքնակալության ութերորդ տարին, անոր օգնությամբ թագավորեց Խոսրով» (Խոր. Գ. 8)։

Ըստ մեր ցանկի, Որմիզդի երկրորդ տարին՝ 305։ Կոստանդի ութերորդ տարին՝ 345։ Դարձյալ շվարում և քրտնաթոր աշխատանք Խոսրով Կոդակի գահակալության առաջին տարին գրտնելու։ Բայց ոչ մեկ շվարում, երբ Խորենացին կըսե թե Խոսրով 9 տարի թագավորեց։

Մենք պիտի ծանոթանանք ի մասնավորի Արշակ Բ-ի տարեթվի խնդրույն։ Արշակ՝ չորրորդ դարու մեծագույն պետական դեմքն է Տրդատեն վերջ, և անոր թվականի ճշտորոշման կարևորությունը բացահայտ պետք է ըլլա ամենուն։

Հայ պատմությամբ զբաղվող ամեն անձի ծանոթ է Խորենացիի 24 տարիներու սխալը թե թագավորներու և թե կաթողիկոսներու պարագային։ Այս կարծես քար գայթակղության մը եղավ, և բանասեր ու պատմաբան, անճրկած, այս 24 տարիի սխալը շտկելու ուրիշ կերպ չգտան բացի կամայականորեն այս կամ այն թագավորի և կաթողիկոսի տարեթվերը խուզելու։

Օրմանյան բարեմիտ անկեղծությամբ կգրե. «Վասն զի Խորենացին հաշիվը թե կաթողիկոսներու, թե թագավորներու և թե կայսրերու տարիներուն մեզ հաստատապես և հավասարապես 24 տարիներու հավելվածական սխալ մը ունի, և այդ 24 տարիները համեմատական

գեղջով ուղղել... (Ագգապատում, Ա հատոր, 116)»։

Եվ ան կսկսի ըստ այնմ ուղղել, ասոր անոր պաշտոնավարության շրջանը կրճատելով։ Ներսես կաթողիկոսի տարիներու մասին կգրեր. «Նորին այս 24 տարիներու հավելվածական սխալն է, որուն ուղղությունը կատարեցինք՝ մասամբ շրջանիս առաջին մասին մեջ Գրիգորի ժամանակին վրա, և մյուս մասն ալ պարտավորյալ ենք Ներսեսի ժամանակին վրա ծանրացնել...։ Սակայն Ներսեսի ընտրությունը 353-ին հաստատելին ետքը և իր մահն ալ 373-են անգին գնել դժվար ըլլալով, անհնար է այդ միջոցին մեջ սեղմեցնել կարծեցյալ 34 տարիները... Ըստ այսմ բոլոր նոր պատմագիրներ պարտավորված են այդ թվերը զեղջել, և քիչ ու շատ 20 տարի տալ Ներսեսի հայրապետության» (նույն, 174—5)։

Հետևարար Արշակն ալ, որուն երրորդ տարին Ներսես կաթողիկոս եղավ, 350-ին գահ ելած կրլլա։

Օրմանյանեն առաջ Գարագաշյանն ալ նրման բռնազբոսիկ կտրատումներ բրած էր։ Տրդատին կուտար 49 տարի, փոխանակ Խորենացիի 56 տարին, Արշակին կուտար 15 տարի, 353—368։ (Քնն. պատ., մաս Գ, 4)։

Հետագա պատմաբաններն ալ հետևեցան Գարագաշյանի և Օրմանյանի, և Արշակ Բ-ի գահակալության տարին 350, կամ ավելի, որոշվեցավ, և տարեթիվերն ալ 15 փոխանակ Խորենացիի 30-ին։

Եվ ինչու այս կամայական կտրատումը կրլլար։ Որպեսզի անխախտ մնան երկու հավատի թվականներ — 428, թագավորության անկումը, և 439, Սահակի մահվան տարին։

Մանանդյանի կողմե Արշակ Բ-ի գահակալության տրված 350 թվականը ընդունելու կդժվարանանք մեկե ավելի պատճառներով։

Հուլիանոսի ներբողական ճառը Կոստանդիոս կայսեր մասին մեր գլխավոր առաջնորդն է Արշակ Բ-ի թվականը ճշտելու։ Հուլիանոս այս ճառը գրեց 355-ին, որով կտեսնենք թե ան Փավստոսե ավելի ժամանակակից է Արշակին։

Այս չափազանց երկար ճառին մեզ հետաքրքրող մասը կարճ է, որը ուսումնասիրելով և տպա բաղդատելով Փավստոսի ցուցմունքներուն, կեզրակացնիմ թե Տիրան թագավորի անկման տարին 337 է, հետևարար Արշակի գահակալությունն ալ 337-ին կամ 338-ին։ Ներսեսն ալ կաթողիկոս՝ 341-ին։

Մանանդյան այս ճառեն մեջբերում բրած է, բայց չէ վերլուծած այդ հանգամանքը։

Հուլիանոս արևելյան թագավորներու հանդեպ անգոսանք ունի, և այս ճառին մեջ անոնց անուններն իսկ չտար։ Շապուհ Բ-ի համար կրսե «բարբարոսներու առաջնորդը», իսկ հայ թագավորին համար երկրի «կառավարիչը»։

Հուլիանոս ակնարկելե վերջ Տիոկղետիանոս կայսեր և պարսիկ թագավորի միջև կնքված 40-ամյա դաշինքին, անոր մասին խոսելե վերջ կգրե.

«Այս դաշինքը անոնք (պարսիկները) հրնարբով բռնարարեցին և կոտրեցին քու հորդ կենդանության ատեն, բայց անոնք իր ձեռքով պատժվելե աղատեցան, որովհետև ան մեռավ պատերազմի պատրաստություններու սկսելե վերջ։ Քեզի կմնար վերջեն զանոնք պատժել իրենց հանդգնության համար»։

Հոս կանգ առնենք և տեսնենք թե ինչ թրվական պահված է այս տողերուն մեջ։ Քու հորդ կենդանության ատեն։ Ով է հայրը։ Մեծն Կոստանդին։ Ով է քու ըսված մարդը։ Անոր որդին Կոստանդիոս։ Հայրը կմեռնի պատերազմական պատրաստություններե վերջ։ Գիտենք թե Կոստանդին մեռավ մայիս 22, 337։ Ուրեմն պարսիկները խաղաղությունը կոտրեցին 337-են առաջ։

Շարունակենք կարդալ ճառին։

«Հայերը, մեր հին դաշնակիցները, ապրստամբեցան, և անոնցմե ոչ փոքր մաս մը պարսիկներու կողմը անցավ և իրենց սահմաններուն մոտակա գավառները արշավեցին։

«Այս ճգնաժամի մեջ ապահովության միակ հույսը կթվեր թե, դուն պետք է գործի գլուխ անցնիր և ծրագրեիր պատերազմը. բայց այդ վայրկյանին անկարելի էր, որովհետև դուն Պանոնիա (Պալբաններ) կգտնվեիր՝ եղբայրներուդ հետ դաշինք կնքելու զբաղված...

«Դուն կատարյալ համաձայնությամբ վերադարձուցիր բանակցությունները եղբայրներուդ հետ և երբ ժամանակը հասած էր, որ քու օգնությունդ կպահանջեր վտանգավոր ճգնաժամի համար, դուն շտապով ճամբա ինկար, և Պանոնիան ձգելեն անմիջապես վերջ երևցար Սյուրիո մեջ... Բայց ով կրնա արդարորեն նկարագրել թե ինչպես քու գալստյանդ լուրին ամեն բան փոխված էր և դեպի լավը դարձած, այնպես որ մենք կազատվեինք մեր երկյուղներեն, որ մեր վրա կախված էին և կրնայինք ավելի փայլուն հույսեր ունենալ ապագային։ Դուն տեղդ չհասած պահակազորքի ապստամբությունը դադրեցավ և կարգը վերահաստատվեցավ։ Հայերը, որոնք թշնամիին կողմը անցեր էին անմիջապես կրկին կողմը փոխեցին, քանզի դուն կրկին վտարեցիր և Հռոմ ղրկեցիր անոնք, որոնք պատասխանատու էին կառավարիչի աքսորին, և ապահովեցիր աքսորյալներու վերադարձը հայրենիք»։

Տեսնենք վերը ըսվածներեն ինչ կրնանք հանել։

Հայերու կառավարիչը (թագավորը) կարգ մը մարդոց սադրանքով արտորված է եղեր դեռ 337-են ալ առաջ. Կոստանդիոս իր եղբայրներու հետ համաձայնելե վերջ Պալրաններեն կանցնի Սյուրիա: Ե՞րբ: Անտարակույս 337-ի աշնան:

Ինչպես կտեսնենք, Հուլիանոս կառավարիչ-թագավորին անունը չի տար: Ուրեմն մեզի կմնա դիմել Փավստոսին՝ իմանալու թե արդյոք հոն կա՞ հիշատակություն հայ թագավորի մը, որ երկրեն դուրս «աքսոր» կերթա՝ դավադիրներու սադրանքով (անոնք, որոնք պատասխանատու էին կառավարիչի «աքսորին»), և որը հետո կվերադառնա Հայաստան բյուզանդական կայսեր միջամտությամբ («և ապահովեցիր աքսորյալներու վերադարձը հայրենիք»): Արդյոք հոն կա՞ բյուզանդական բանակի մը Հայաստան գալը:

Կարդանք Փավստոսի Գ 20 և 21 գլուխները: Այս երկու գլուխները շատ երկար են մեջբերում ընելու, ուստի խտացնենք:

Գլուխ 20.— Ատրպատականի սահմանապահ Վարազշապուհ հայ դավակիցներու հետ խարեբայությամբ կբռնեն Տիրան թագավորը, և Վարազշապուհ «հետն առնելով Տիրան թագավորին և ամբողջ գերությունը, փութով կերթար կհասներ Պարսից աշխարհը և կերթար Ասորեստան իր տիրոջ պարսիկ թագավորի մոտ»:

Ահա Հուլիանոսի ակնարկած կառավարիչը, որ «աքսոր» կերթա:

Գլուխ 21.—Հայ նախարարներ երկու հոգի պատգամավոր կղրկեն օգնություն ուզելու «հունաց թագավորեն»: Օգնություն կուգա: Բյուզանդական զորք Հայաստան կուգա: Պարսիկները կպարտվին:

«Այն ժամանակ հունաց Վաղես թագավորը հրովարտակ կգրեր Պարսից թագավորին. «Նախ դուն, կըսե, ետ դարձուր Հայոց աշխարհե տարած գերիներդ, Տիրան թագավորով միասին, և առհասարակ ինչ որ այդ տեղե առած ես. երբ դուն այս կընես՝ ապա ես ալ ետ կդարձնեմ ինչ որ առած եմ»:

Դիտամամբ վերևի մեջբերումը բրի, ցույց տալու Փավստոսի գրելու անխնամ ձևը, օրինակ. հունաց թագավորը Վաղես կանվանե: Վաղես 364-ին գահ բարձրացավ: Այս միևնույն գլուխին մեջ պարսիկ թագավորի անունը Ներսեհ կկոչե, փոխանակ Շապուհ Բ-ի: Ներսեհ թագավորեց 293—303: Որով եթե անուններու վրա խաղաս, կրսես, սա անհնարին բան է. ինչպես 364-ին գահ ելած թագավոր մը 61 տարի առաջ մեռած թագավորի մը հետ կպատերազմի կամ կթղթակցի:

Փավստոսի մեջ, սակայն, պատմական դեպքերուն մեծամասնությունը ուղիղ ներկայացուցած են: Դժվարությունը թվականի և անուններու ճշտումն է, որուն համար ստիպված դիմելու ենք ուրիշ աղբյուրներու, եթե գտնենք:

Փավստոսի վերոհիշյալ երկու գլուխներուն դեպքերը կատարելապես կհաստատեն Հուլիանոսի ճառին պատկան կետերը. և ճառն ալ կճշտե Հայաստանի «կառավարիչին» գերութենե վերադարձի տարին, 337:

Հետևաբար Արշակի գահակալության տարին կըլլա 338: Խորենացիին հակիրճ տողերը ուշագրավ են. «Բայց Շապուհ Տիրանի փոխարեն թագավորեցուց անոր որդին Արշակը, ակնածելով հայոց զորքերե, որպեսզի որևէ կերպով չխափանեն իր ձեռնարկելիք գործը» (Խոր. Գ. 18): Իր ձեռնարկելիք գործը (իմա՝ պատերազմ Բյուզանդիոնի դեմ, որ կպայթեր 338-ին):

Բայց չես դիտեր ինչ հիման վրա Մանանդյան Տիրանի մասին գրելուն կըսե. «Նրա գերեվարության և կուրացման մասին հայկական ավանդությունը վիպական-առեղծական պատմվածք է, և մենք նրա մահվան մասին ես չունենք ոչ մի տեղեկություն» (156):

Նախ, հայկական ավանդություն չէ: Երկու պատմիչներու վկայություն է. Փավստոս և Խորենացի: Իսկ իր մահվան մասին ալ տեղեկություն կուտա Խորենացին—Տիրանի սենեկապանները խեղդեցին զինք Արշակի հրամանով:

Արշակը 350 թվականին գահ հանելը ուրիշ դժվարության կմատնե մեզ: Արշակի արտաքին քաղաքականությունը երկու գլխավոր և հակոտնյա շրջան ունի: Առաջինին, Արշակ ի նպաստ Պարսկաստանի քաղաքականություն կվարե, թերևս հարկադրված, որովհետև Շապուհն է որ զինք գահ բարձրացուցած էր, Արշակ նույնիսկ պարսիկ-բյուզանդական պատերազմին ալ Շապուհին օգնական հայ զորագունդեր կղրկե: Փավստոսն երկարորեն կմանրամասնե այդ (Դ. 20):

Եթե Արշակ, ըստ նոր պատմաբաններու, 350-են վերջ թագավորեց, պարսիկ-բյուզանդական պատերազմ չկա մինչև 363: Մինչ 350-ին Արշակն ալ արդեն Բյուզանդիոնի հետ բարեկամացած է այն աստիճան, որ բյուզանդական իշխանուհի կղրկվի իրեն կայսեր կողմե, և հայ պատանդ իշխաններ ետ կղրկվին Հայաստան:

Բայց պարսիկ-բյուզանդական պատերազմ կա—և ի՞նչ պատերազմ—338-են մինչև 349: Կամ պիտի ըսես, որ Փավստոսի գրքին այդ ամբողջ գլուխը սուտ ու փուտ բան է, կամ հրաժարիս այդ հարցը քննելե, ըսելով՝ ես եմ մեռայեր այս թնճուկը լուծելիք անձ:

Արշակի 30 տարի իշխելուն կրնա փկայել իր բազմապիսի գործունեությունը: Նույնիսկ Փավստոս, որ տարեթվեր տալու սովորություն չունի, տարբեր գլուխներու մեջ հիշածները

գրեթե 40 տարվա թագավորություն կուտան Արշակին։ Օրինակ, Արշակ 6 տարի կռիվ կմղե հունաց դեմ (Փավստ. Դ. 11)։ Ավելի քան 30 տարի պարսիկներու դեմ (Փավստ. Դ. 20)։

Մանանդյան Պապ թագավորի մասին գրելուն կպնդե թե Փառանձեմն էր անոր մայրը, ոչ թե Օլիմպիան։ Ինձի մեծ զարմանք պատճառեց այս պնդումը, որ զինք բոլորովին անհույս անելի մը մեջ ձգած է, և ինքն ալ, ճարահատ, կգրե. «Պետք է ասել, որ Պապի տարիքի խնդիրը մինչև այժմ վեճի առարկա է և դեռևս վերջնական կերպով չէ պարզված»։ (202)։

Ինչո՞ւ կառչած կմնա Փավստոսի գրածին թե Փառանձեմ ծնունդ տվավ Պապին, մինչ Փավստոսի ուրիշ շատ մը ըսածները կմերժե առանց այլևայլի։ Օրինակ, Փավստոս կըսե Փառանձեմ Արշակի առաջին կինն էր։ «Հետո Արշակը իրեն կին առավ սպանված (Գնելի) կնոջը Փառանձեմին։ Եվ որքան Արշակ սիրեր կնոջը՝ այնքան ալ սա կատեր Արշակ թագավորին, ըսելով թե, «թաւ է մարմնով, թուխ է գունով»։ Վերջը, երբ կնոջ սիրտը Արշակին չկպավ՝ սա մարդ ուղարկեց հունաց երկիրը և այնտեղեն կայսերական տոհմեն խնդրեց բերել տվավ իրեն կին Ոլոմպի անուն»։ (Դ. 15)։

Մանանդյան կմերժե այս, և, իրավամբ, կըսե Փառանձեմ Արշակի երկրորդ կինն էր։ Բայց, Փավստոսի այս հավաստումը առանց պատճառաբանության մերժողը, կընդունի, առանց պատճառաբանության, անոր ըսածը թե Պապ ծնավ Փառանձեմեն, հոգ չէ թե նման պնդում անկարելի կդարձնե Պապի տարիքի հարցին յուծումը։

Օլիմպիային կայսր նշանածը սպանեցավ 350, փետրվարին, որով Օլիմպիան Հայաստան կուգար այդ թվականեն վերջ, 350 կամ 351, Օլիմպիային հետ եկավ Գնելը։ Արշակ կամուսնանա Օլիմպիային հետ։ Գնել կամուսնանա Փառանձեմին։ Այս մասին վեճ չկա։

Գնել ե՞րբ սպանվեցավ։ Արշակ անոր այրիին հետ կամուսնանար 360-ին։ Պապ Փառանձեմն կրնար ծնիլ ամենականուխր 361-ին։ Բայց սա անհնարին է, քանզի, այդ պարագային, Պապ յոթ տարեկանին թագավոր կրլլա, և 14 տարեկանին կսպանվի։ Մինչդեռ 374-ին երբ սպանեցին զինք՝ ան երկու մանչ զավակներու հայր էր։ Իսկ Ամմիանոսն ալ արդեն Պապը կներկայացնե արթնամիտ և ձեռներեց երիտասարդ մը։

Մանանդյանի գրքին մեջ այս հարցին վրա բացատրություն կամ փաստ չենք գտներ, և ինքն ալ, ափսոս, այժմ մեր մեջ չէ ավելի լուսաբանելու մեզ։

Պապի հայ եկեղեցվո շուրջ մղած պայքարի մասին Մանանդյանի անծանոթ մնացած է կարևոր աղբյուր մը—Բարսեղ Կեսարացիի նամակները։

Ներսեսի մահեն վերջ պահ մը իր հաջորդի ընտրության հարցը գրեթե պետական խնդիր դարձավ։ Բարսեղի նամակներեն է որ կանգնկանանք Պապի համառ պայքարը՝ եկեղեցվո տիտան Բարսեղի և անոր համախոհ Հայաստանի եպիսկոպոսներուն դեմ։ Պայքար, որ պիտի վերջանար հայ եկեղեցվո անկախությամբ (այս պայքարի փուլերը ներկայացուցած եմ իմ Պապ Արշակունի հատորի մեջ։ Հոս ավելորդ է կրկնել)։

Մանանդյան կխորհի թե Հայաստանի մեջ քրիստոնեության պետական կրոն հռչակվիլը 313 թվականին էր։ Ըստ իրեն, Հայաստան Հռոմեական կայսրության մաս կկազմեր, և երբ 313-ին Միլանի հրովարտակով քրիստոնեական պաշտամունքի ազատություն տրվեցավ, Հայաստանն ալ օգտվեցավ, և Տրդատ քրիստոնեությունը պետական կրոն հռչակեց։ (Մանանդյան, 117)։

Այս վիճելի է։ Միլանի հրովարտակը միայն պաշտամունքի ազատություն տվավ քրիստոնյաներուն, որոնք խիստ հալածանքներու ենթարկված էին նախորդ կայսրերու կողմե։ Այդ հրովարտակը քրիստոնեությունը պետական կրոն չհռչակեց հռոմեական աշխարհի համար։ Այդ քայլը պիտի առնվեր 65 տարի վերջ Թեոդոս կայսեր կողմե։ Նույնիսկ հրովարտակը տվող Կոստանդին քրիստոնյա մկրտվեցավ իր մահվան տարին, հրովարտակ 24 տարի վերջ։

Հայ թագավորներու կողմե պաշտոնապես՝ քրիստոնեության հալածանքի հիշատակություն չունենք մեր աղբյուրները։ Որ Հայաստանի մեջ բազմաթիվ քրիստոնյաներ կային Տրդատեն առաջ, նույնիսկ եպիսկոպոսական աթոռ, իրողություն է։ Բայց մեզի ծանոթ չէ հայ թագավոր մը, որ Դեսիոս կամ Դիոկղետիանոս կայսեր նման հալածանքը որդեգրե որպես պետական քաղաքականություն։

Տրդատ քաղաքական նկատումներով քրիստոնեությունը պետական կրոն հռչակեց Գ դարու վերջին քառորդին։ Այս մասին իմ պատճառաբանությունս տալ շատ պիտի երկարի այս հոդվածը, որ արդեն ծրագրածես ավելի երկարեցավ. ուստի այդ կձգեմ ուրիշ առենվո։

Մանանդյան եթե 313 թվականը հիշելով, որպես քրիստոնեության Հայաստանի մեջ պետական կրոն հաստատումը, կակնարկե նաև Գրիգորին, այդ պարագային Խորենացիի տված կաթողիկոսներու տարեթվերը այնքան պիտի խախտին, որ հաջորդական պատմաբան՝ներու համար նորանոր կնճիռներ պիտի ստեղծվին։ Այդ հաշվով՝ Սահակ կաթողիկոսի մահվան

տարին պիտի ըլլա 473 թվականը, փոխանակ ստույգ 439-ի։

Կխորհինք թե, Խորենացիի տված տարեթվերը, թե արքաներու և թե կաթողիկոսներու, այս կերպ այլափոխելը չորրորդ դարու մեր պատմության դժվարությունները հարթելու հաղիվ թե ծառայեն Ընդհակառակը։

Մեր այս տողերը երջանկահիշատակ Մանանդյանի հատորին գրախոսականը չեն, այլ քանի մը դիտողություններ ի խնդիր պատմական հարցերու ճշտորոշման։ Սիրելի է ինձ ավելացնել թե իմ ըսածներս ոչ մեկ կերպով կնսեմացնեն անոր գրքին իրավ արժեքը, որ շատ մեծ է և տևական։

Հրանտ Ք. Ալրմեն
(Կալիֆորնիա, ԱՄՆ)